Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Ջաղացաձոր գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Մայրենի» /5-րդ դասարան՝ 6 դասաժամ/ «Հայոց լեզու և գրականություն » /7-րդ դասարան՝ 5 դասաժամ/, «Մաթեմատիկա» /5-րդ դասարան՝ 5 դասաժամ/ և «Երկարաչափություն» /7-րդ դասարան՝ 2 դասաժամ/, «Ռուսաց լեզու» (19 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (7 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում՝ (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)՝
- Անձնագրի պատճենը,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստատթուղթ(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2024թ մայիսի 27-ից **մինչև** հունիսի 10-ը **ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հունիսի 12-ին՝ ժամը 14:00-ին,** Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր գյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ,Ջաղացաձոր 2-րդ փողոց , 2-րդ նրբանցք շենք 4 **Հեռ.՝ 093-400-626**